

ԵՐԵՔ ԵՂԲԱՑՐՆԵՐԻ ԿԱՄ ԱՐԵՒՆԵՐԻ ԴԻՑԱԲԱՆՈՒԹԻՒՆԸ ՀԱՅ ԵՒ ՕՏԱՐ ԲԱՆԱՒՈՐ ՄՇԱԿՈՑԹՈՒՄ

ԳԱԳԻԿ ՄԱՐՏՈՑԵԱՆ

Հայ միջնադարեան եկեղեցական-մեկնական գրականութիւնից մեզ է հասել «Պատմութիւն Վասն Մանկան» եւ Աղջկանն» կամ «Հարցմունք Աղջկան Ընդ Մանկան» անուններով յայտնի մի զրոյց¹, որի ժԶ.-ԺԹ. դարերի գրչութեանը վերագրուող 33 ընդօրինակութիւն պահում է Երեւանի Մաշտոցի անուան Մատենադարանում: Շատ այլ օրինակներ գտնուում են արտասահմանում եւ մասնաւոր հաւաքածուներում²:

Հայ գեղարուեստական արձակի հնագոյն նմուշների շառքին պատկանող այս երկուում այլաբանօրէն շարադրում է Հերոսի՝ Մանկան երկրային հարստութիւնից Հրաժարուելու, հանդերձեալ աշխարհում (դրախտում) մեծ հարստութեան արժանանալու պատմութիւնը³: Պատմութեան հերոսը՝ Մանուկը ճիռու վրայ քնելով, յայտնուում է Ծրհորի մօտ: Իր քսակով ջուր է խմում: Համարում է, որ իր մահն է խմել եւ յայտնուում է հանդերձեալ աշխարհում: Այստեղ հիւրընկալուում է մի պառաւի տանը: Նրանից խմանում է, որ երկրի արքայադրուտը (Աղջիկը) ցանկանում է ամուսնանալ եւ այդ նպատակով հարցեր է ուղղում փեսացուներին: Հարցերը գերակշռող մասով աստուածաբանական են, բայց քանի որ փեսացուները չեն կարողանում գտնել դրանց պատասխանները, ուստի Աղջկայ հրամանով գլխատուում են: Մանուկը գնում է արքունիք, պատասխանում է Աղջկայ բոլոր հարցերին եւ նրա հետ ամուսնանալով, երկնային արքայութեան արժանանում:

Հայ բանագիտութիւնն այս ստեղծագործութիւնը երբեւէ չի դիտարկել առասպելաբանական տեսանկիւնից եւ քննութեան չի առել դրա այլաբանական պատկերների հարուստ համակարգը, որը վերակիմաստաւորման է ենթարկուել քրիստոնէական պրիսմակի միջոցով՝ Արեւի եւ Լուսնի վերաբերեալ վաղնջական դարերից եկող դիցաբանական հաւատալիքների հիման վրայ:

Զրոյցում Մանուկն ակնյայտօրէն արեւային խորհրդանիշներով է նկարագրուում, Աղջիկը՝ լրանային: Մանուկն աշխարհ է գալիս իրբեւ «զաւակ մի գեղեցիկ՝ արեգական նման»⁴: Հասակ առնելով, իրեն ծնուած է համարում «Խոյ» համաստեղութիւնում, որը հնում դիտուել է իրբեւ գարնանային տարեսկիզբ, ուր ծնուել եւ զօրացել է Արեգակը:

Աղջիկն իրեն կոչում է «Դայեկ» (դայեակ), որն է-դարի հայ գիտնականին Անանիա Շիրակացու մատենագրութեան մէջ անձրեւներ առաջացնող եւ բուրաստաններ սնող Լուսնի անուանումն է⁵, իսկ Հայկական միջնադարեան նշանագրերի աղիւսակում տեղաւորուած է խոնաւութիւն, ամպրոպ եւ անձրեւ արտայայտող խորհրդանշների սիւնակում⁶: Զրոյցի մի տարբերակում Աղջիկն իր նաժիշտների հետ այցելում է Սանկանը, իսկ նաժիշտները վերջնիս սենեակին հասնելով, ճայնում են. «Ձինչ, որ լուսին արեգական սիրոյ տէր է, այսպէս եւ մեք անպատճառ կամիմք տեսնել գքեզ»:

Ցաւօք, մէկ յօդուածի շրջանակները թոյլ չեն տախս աւելին հաղորդել զրոյցի խորհրդանշների այլարանական չափազանց ուշագրաւ Հայեցակարգի մասին, որի իմաստաբանական զուգացեռները լայնօրէն տեղ են գտել ո՛չ միայն հայ միջնադարեան եկեղեցական-մեկնական գրականութեան մի շարք նմուշների, այլև միմեանց հետ պատմական սերտ շփումների մէջ եղած տարբեր ժողովուրդների ստեղծագործութիւններում: Այս ամէնի հանգամանալից շարադրանքը աւարտուն տեսքի ենք բերել մեր «Մանուկ Արեւը եւ Նրա Քրիստոնէական Կրկնորդը» անտիպ մենագրութեան մէջ: Այստեղ սակայն Հարկ ենք համարում բաւականանալ միայն ասերով, որ զրոյցում արդար եւ առաքինի քրիստոնեայի կերպարը մարմնաւորող Մանուկը՝ քրիստոնէական քարոզիչների միջամտութեամբ, համազրուել է ամէն ինչի արդար դատաւոր եւ մարդկային առաքինի կենսակերպը Հսկող Մանուկ Արեւի մասին ժողովրդական զանգուածներում գոյութիւն ունեցած ջին, նախաքրիստոնէական ըմբռնումներին:

Մանուկը եւ Աղջիկը դիցարանական Արեւ եւ Լուսին հերոսներն են, որոնց երկնային ամուսնութեան մասին պատմող առասպելոյթը թաքնուած է Օձ Մանուկին վերաբերող Հայկական ժողովրդական հեքիաթաշարում:

Միեւնոյն ժամանակ այս ստեղծագործութեան մէջ բացառիկ հարազատութեամբ կրկնուած ենք տեսնում աշխարհի տարբեր ժողովուրդների, այդ թւում՝ հայերի բանահիւսութիւնից յայտնի երեք եղբայրների մասին պատմող հեքիաթների նախադրութեան կաղապարը, ըստ որի, թագաւորի երեք զաւակները ճանապարհուում են կորած արքայադուստրերին փնտուելու (ամուսնութեան ձգտում), կուրացած հօր աչքերի գեղը գտնելու կամ ուղղակի բախտ որոնելու նպատակով: Աւագ եղբայրները կրտսերին իջեցնում են հորը կամ ջրհորը, եւ նա յայտնուում է հանդերձեալ՝ Մութ աշխարհում: Այստեղ նա սպանում է երեք դեւերի (վիշապների) եւ ազատում նրանց առեւանգած աղջիկներին Աւագ եղբայրները՝ կրտսերի յաջողութեանը նախանձելով, նրան դաւաճանաբար թողնում են հորում: Մութ աշխարհում, կրտսերը հիւրընկալուում է մի պառաւի տանը, նրանից

ջուր է խնդրում ծարաւը յագեցնելու համար, սակայն պառաւը յայտնում է, որ քաղաքի ջրի ակը փակել է սուկալի վիշապը եւ ջուր է բաց թողնում միայն մարդկային զուր (աղջիկներ) ստանալուց յետով: Կրտսեր եղբայրը գնում, յաղթում է վիշապին այնպէս, ինչպէս զրոյցի Մանուկը՝ Աղջկան:

Սիւժէի շարունակութեան մէջ կրտսեր եղբայրը ազատում է վիշապի մօտ զոհաբերութեան ուղարկուած արքայալստերը, իսկ արքան հերոսին խորհուրդ է տալիս Մուլթ Աշխարհից Լոյս Աշխարհ դուրս գալու համար դիմել անտառում ապրող հաւքի (արծուի, Ձմռուտ կամ Ծովինար ղուշի) օգնութեանը, որն ամէն անգամ զանգատում է, թէ իր ձագերին սպանում են, բայց չգիտէ, թէ՝ ո՞վ: Հերոսը պահակ է կանգնում թռչնի բնին եւ տեսնում, որ մի վիշապ է գալիս, փաթթաթում ծառին ու սկսում բարձրանալ: Հերոսը կտոր-կտոր է անում վիշապին եւ կտորները լցնում բնի մէջ՝ ձագերին կերակուր: Ինքը պառկում է ծառի տակ եւ քնում: Գալիս է հաւքը եւ տղային տեսներով, կարծում է, թէ նա է իր ձագերին սպանողը: Ուզում է ծուէն-ծուէն անել, բայց ձագերը չեն թողնում: Թոչունը՝ Հասկանալով, որ քնած հերոսն իր բարերարն է, թեւերով հովանի է անում նրան, իսկ երբ վերջինս արթնանում է, նրան հանում է Լոյս Աշխարհ: Հերոսն ամուսնանում է դեւերից իր պատած աղջկներից կրտսերի հետ⁹:

Հայկական նմանատիպ հեքիաթներից, որոնց թիւը մի քանի տասնեակից աւելի է, կարելի է լիշտատակել յատկապէս «Անմահական ինձոր»¹⁰, «Ռւակէ և ունձուրուն Նաղըլը»¹¹, «Հազարան Բլրուկ կամ Ալօ-Դինոյի Նաղըլը»¹², «Ղուշ-Փարին»¹³, «Աժդահակը»¹⁴ եւն..:

Երեք եղբայրների մասին հեքիաթային համանման մոտիւների առասպեկանութիւնը վաղուց նկատել է հայագիտութեան մեծ երախտաւոր Մանուկ Արեղեանը եւ Կուահել, որ դրանք յայտնի են եղել նաեւ Եղարծում ապրած պատմահայր Մովսէս Խորենացուն, որն այդ մասին աղօտ լիշտակում է Արծրունեաց տումի նախնու եւ «Արծրունի» անուան բացատրութեան կապակցութեամբ: «Թողում զառասպեկեացն բաջադանա, որ ՚ի Հադամակերտին պատմին. մանջան (ընգծումն իմն է - Գ.Մ.) նիրհելոյ անձրեւ եւ արեւ հակառակեալ եւ հովանի թոշնոյ պատանւոյն թալկեցելոյ»¹⁵: Աբեղեանն այս առիթով գրել է: «Մի անգամ, որ այս հեքիաթի առաջին մասը, Մուլթ աշխարհում ջրի առաջը կտրող վիշապին սպանելը, Սանասարի մասին պատմուած առասպելն է, պէտք է կարծել, որ Սանասարին է վերաբերել նաեւ դրա բնական շարունակութիւնը, Ձմռուտ հաւքի (արծուի) ձագերն ուստող վիշապին սպանելն եւ Մուլթ աշխարհից Լոյս աշխարհ ելնելը: Ճիշտ է, վէպի (այսինքն՝ Սամայ Մուեր էպոսի - Գ.Մ.) մէջ պատմուած չկայ հեքիաթի այս մասը...: Բայց ... Խորենացին յիշում է վերեւի առասպելի մի կտորը, թէ յոգնած ու քնած տղայի, որ է Սանասարի վրայ արծիւը հովանի է արել: Հնումն անպայման ամբողջ առասպելն, ինչ

որ վէպի եւ հեքիաթի մէջ կայ, պատմուած է եղել Սանասարի կամ իր եղբօր մասին: Բայց պատմագիրն արհամարհելով այդ առասպեկը, դրա մի մոտիւն է միայն մէջ բերում եւ այդ էլ միայն նրա համար, որ յայտնի, թէ Արծրունիներն իրենց անունը ծագած են համարում իրենց նախնուն հովանի անող արծուից»¹⁸:

Ցետագայ ժամանակներն ապացուցեցին Աբեղեանի կուահման արդարացիութիւնը: 1970ականներին գրի առնուեց հայկական էպոսի մի նոր պատում, որը լրացնում էր առասպեկի բաց թողնուած մասը եւ նոյնութեամբ կրկնում երեք եղբայրների հեքիաթների մոտիւները: Ահա այդ դրուագները:

Սանասարն ու նրա եղբայր Բաղդասարը Քառսուն ձող Մամի քաղաքում կուտում են փահեւանների դէմ եւ յաղթում: Աղջկայ առաջարկով, Սանասարը ծովից հրեցէն ձի է հանում, գնում Օձ Քաղաք եւ սպանում թեւաւոր վիշապին, որն արեւի երեաը բռնել էր: Քաղաքի թագաւորը կամենում է պարգեւատրել վիշապին սպանողին, բայց Սանասարը դրան չի սպասում: Նա գալիս է Պառաւի տուն, որն իրեն հիւրընկալել էր քաղաք մտնելիս: Ձուր է ուզում նրանից, բայց պարզուում է, որ քաղաքում ջուր չկայ: Վիշապը փակել է աղբիւրի ակը եւ ջուր է բաց թողնում, երբ աղջիկ են զոհաբերում: Հերթին հասած է լինում թագաւորի աղջկան: Սանասարը նրա հետ գնում, սպանում է վիշապին: Թագաւորն՝ այդ մասին իմանալով, կամենում է գահը ժառանգել վիշապասպան հերոսին, բայց Սանասարը դրա փոխարիէն խնդրում է իրեն դուրս բերել նրա աշխարհց եւ իր երկիրն ուղարկել: Թագաւորը դա իր ուժերից վեր է համարում եւ խորհուրդ է տալիս գնալ անտառ եւ փրկել արծուի ձագերին, որոնց ամէն անգամ խժուում է վիշապը եթէ նա սպանի վիշապին՝ արծուից օգնութիւն կը ստանայ: Սանասարը գնում է անտառ եւ ծառի տակ պառկած, սպասում է: Վիշապը գալիս, փաթաթւում է այն ծառին, որի կատարին արծուի բոյնն է: Սանասարը թրատում է վիշապին եւ կտորները գցում ձագերին՝ որպէս կերակուր: Ինքը պառկում է ծառի տակ ու քնում: Արծիւը գալիս, տեսնում է Սանասարին, կարծում է, թէ նա է իր ձագերին սպանողը: Բարձրանում է երկինք, որ այնտեղից ինչի ու իր թշնամու վերջը տայ, ձագերը ձայն են տալիս, թէ նա է իրենց ազատարարը: Արծիւն իխնում, տեսնում է վիշապի կտորներն ու թեւերը բացում, հով է անում որ Սանասարը քնի: Այնուհետեւ արծիւը Լոյս Աշխարհ է հանում իր բարերարին¹⁹:

Մեզ յայտնի չէ գիտահետազոտական որեւէ ուսումնասիրութիւն, որը հանդերձեալ աշխարհ՝ ստորերկրայք մտնող (այսինքն՝ մեռնող) եւ այնտեղից վերադարձող (այսինքն՝ վերածնուուր) հերոսի մասին պատմուած այս սիւծէի մոտիւներն ուղղակիորէն կապէր վաղ ժամանակներից եկող արեւային առասպելաբանութեան հետ: Մինչդեռ Արեւի «մահուան»

մասին գոյութիւն ունեցած հաւատալիքները վկայուած են աշխարհի շատ ժողովուրդների, այդ թւում՝ հայերի աւանդութիւններից:

Հիւսիսամերիկեան Algonkin ցեղի Հնդկացիներն օրինակ, Արեւը պատկերացնում էին, իրեւ հրաշալի, կարմիր կարապ, որից հզօր լոյս է ճաճանչում: Մի անգամ այգաբացին, թի մօտ, որսորդը տեսել էր այդ հրացողքը եւ նետահարել նրան: Վիրաւոր կարապն ուղղութիւն էր վերցրել դէպի արեւմուտք եւ անհետացել արնակարմիր հորիզոնում: Բիրմայի Կարո ցեղի ծէսերում էին գոհաբրուուղ թռչուններին եւ ասում: «Դու կ'ուղեւորուես ստորգետնեայ երկրներ, ուր Արեւն է թափառում...: Ես քեզ իմ սուրհանդակն եմ դարձնում»:

Նրանք հաւատում էին, որ երբ Արեւը երկրի վրայ մայր է մտնում, ծագում է հանդերձեալ աշխարհում, իսկ երբ մայր է մտնում հանդերձեալ աշխարհում, ծագում է երկրի վրայ՝¹⁸:

Հայկական մի հաներուկում մեռնող-յառնող է ոչ միայն Արեւը, այլեւ Լուսինը. «Քոյր եւ եղացր են. մինն առաւօտն է ծնւում, երեկոյեան՝ մեռնում, միւրը՝ երեկոյեան ծնւում՝ առաւօտը՝ մեռնում»: Պատասխանը՝ «Արեւ, Լուսին»՝¹⁹: Ներսէս Շնորհալու մի հաներուկում Արեւը ծնուելիս եւ մեռնելիս, միեւնոյն Մանուկն է. «Տեսի զմանուկ մի, որ ծնանէր, եւ նոյն օրն մեռանէր, յտո թաղելոյն դարձեալ յառնէր, ի այլ գեղեցիկ զինք ցուցանէր»՝²⁰:

Հանդերձեալ աշխարհ ընկած (յաճախ՝ ջրհորի միջով) երրորդ հերոսի կերպարը մեծ տարածում է ունեցել բազմաթիւ ժողովուրդների դիցաբանութեան եւ բանահիւսութեան մէջ: Երրորդ հերոս է համարւում նաեւ Հնդկարիական Տրիտան (Հնդեւրոպական նախալեզուի տես՝ «երեք» կամ հին Հնդկերէն լրեցա՝ «երրորդ» արմատներից), որը Ոմեչվերայում նստած է ջրհորի մէջ եւ նայում է գիշերային երկնքին: Ռուս անուանի բանագէտ Վլադիմիր Տոպորովը նրա իրանական համարժէքն է համարել վիշապասպան Տրայտառնային, ինչպէս նաեւ հայկական վահագնին՝²¹: Վերջինիս արեւային ընոյիթի մասին տեղեկութիւնն է պահպանուել հայկական միջնադարեան «Տօնական Մատեան» ձեռագրում: Անանուն հեղինակը յիշել է. «Ոմանք զարեգակն պաշտեցին եւ վահագն կոչեցին եւ այլք՝ զլուսին եւ Արտեմիս ձայնեցին»: Ա. Դարի յոյն փիլիսոփայ Փիլին Եբրայեցու «Վասն տասնարաննեան օրինաց» գրուածքի հայերէն թարգմանութեան մէջ ասուած է. «Քանզի կոչեն ունանք... զնուր Հեփեստոսն եւ արեգական զՎահագն»՝²²: Վահագնը փոխարինում է ընազդրի «Ապոլոն» անուանը, որը նոյն թարգմանութեամբ հանդիպում է հին հայկական այլ ձեռագրերում եւս՝²³: Տոպորովը Տրիտան (Վահագնին) համեմատել է նաեւ ոռւսական հեքիաթների երրորդ եղացր հետ, չկենտրոնանալով սակայն, նրան վերագրուած անունների արեւային յատկանիշների վրայ: Ուշագրաւ է, որ այդ

եղբօրը յաճախ կոչում են «իւան Տրետէյ» (իւան Երրորդ), «իւան Վոդովիչ» (իւան Ջրորդի)²⁴, ինչը ոչ միայն համաշռունք է Ռիգվետայի հերոսի՝ Տրիտոյի անուանը, այլև յուշում է ջրի հետ նրա ունեցած կապը։ Հարկ է լիշտատակել, որ Տոպորովին յայտնի հեթափներում էլ աւագ եղայրների ձեռքով դաւաճանարար ստորերկրայք ընկած կրտսերը, ինչպէս հայկական էպոսում եւ հեթափներում, Լոյս Աշխարհ դուրս գալու հնարաւորութիւն է ստանում միայն այն ժամանակ, երբ փրկում է ծառի վրայ բուն դրած թոշնի ձագերին։

Առաւել հետաքրքիր են ոռուսական երրորդ հերոսի այն անունները, որոնք ցերեկային կամ գիշերային Արեւը (Լուսինը) եւ նրա լոյսն են խորհրդանշում։ Ivan Utrennoi Zarî (Այգաբացի իւան), Ivan Polunochnoi Zarî (Կիսամութի Այգի իւան), Svetovik (Լուսատու), Svetozor (Լուսահետաց), Vechernik (Իրիկունիկ), Polunochnik (Կէսգիշերիկ)²⁵։

Ակեքսանդր Աֆանասևի գրառած ոռուսական «Զորկան, Վեչորկան եւ Պոլունոչկան» հեթափում էլ երեք եղայրների անուններն առնչում են ցերեկային եւ գիշերային Արեւներին²⁶։ Զորկան Այգաբացն է, Վեչորկան՝ Իրիկունիկը, Պոլունոչկան՝ Կէսգիշերիկը։ Նրանք էլ ճանապարհուում են առեւանգուած աղջիկներին գտնելու եւ խորխորատի միջով ընկնում են Հանդերձեալ աշխարհ, որտեղ սպանում են բազմագլուխ վիշապների եւ ազատում աղջիկներին։

Վրացական «իւան Զարիա» (Արշալոյսի իւան) հեթափում²⁷, որը գոնէ անուանապէս փոխառուած պէտք է համարել ոռուսական բանահիւսութիւնից, ակնյայտօրէն երեւում է, որ երեք եղայրները երկնային երկու լուսատուների՝ ցերեկային Արեւը եւ գիշերային Լուսնի եռակի մարմնաւորումն են։ Հեթափի բովանդակութիւնը հետեւեալն է։

Մի քաղաքում անզաւակ դարրին էր ապրում եւ շատ էր ուղղում երեխաներ ունենալ։ Նրա կինը մի անգամ գետից երեք խնձոր բռնեց։ Մէկը տուեց ամուսնուն, երկրորդն ինքը կերաւ, իսկ երրորդը հաւասար կիսեց իր եւ ամուսնու միջեւ։ Կինը ծանրացաւ եւ ինն ամիս անց, երկունքի ցաւերով բռնուեց։ Կանչեց տատմօրը։ Յանկարծ կնոջ որովայնից ճիշ լսուեց։

- Պատրաստուէք կնքել իհնձ, թէ չէ՝ կը թոշեմ երկինք, չէք հասցնի։

Երեկոյեան տղայ ծնուեց, որին կնքեցին եւ անուանեցին իւան Վեչերնիյ (Իրիկուայ իւան)։ Նա կերաւ մօր կաթը եւ թռաւ երկինք։

Հենց տատմայրը պատրաստում էր հետանալ, նորից ճիշ լսուեց։

- Բաց մի թողէք նրան, հիմա աշխարհ կը գամ եւ կը թռչեմ...։

Կէսգիշերին ծնուեց երկրորդ որդին, որին կնքեցին եւ անուանեցին իւան Պոլունոչիյ (Կէսգիշերուայ իւան)։ Սա էլ մօր կաթը կերաւ եւ թռաւ երկինք։

Այդաբացին ծնուեց երրորդ որդին, որին անուանեցին իւան Զարիա (Արշալոյսի հւան): Սա էլ մօր կաթը կերաւ եւ թռաւ երկինք:

Այդպէս էլ երեք եղբայրներն ապրում էին երկնքում՝ թռչելով աստղերի ու ամպերի միջով: Օրը մէկ անգամ գալիս էին մօր կաթն ուտելու՝ իւրաքանչիւրն իր ժամին՝ իրիկուայ իւանը՝ երեկոյեան, Կէսգիշերուայ իւանը՝ Կէսգիշերին, Արշալոյսի իւանը՝ արշալոյսին: Նրանք այդպէս էլ ոչ մի անգամ չտեսան իրար:

Քաղաքում ապրում էին թագաւորի երեք գեղեցկուհի գուստորերը, որոնք մշտապէս տանն էին նստած եւ արեւի երես չէին տեսնում: Հայրը մի անգամ ասաց նրանց:

- Գնացէք արեւի երես տեսէք:

Հենց նրանք դուրս էին եկել, ամպեր հաւաքուեցին, երկինքը մթնեց եւ ամպրոպ ճայթեց: Յայտնուեց վիթխարի դեւը եւ փախցրեց աղջկներին: Նրանց փրկելու գնացին երեք եղբայրները: Նրանք հասան լերան ստորոտին, որի ընտերքում քնած էր երկաթէ դեւը: Արշալոյսի իւանն արթնացրեց նրան եւ խնդրեց, որ օգնի բարձրանալ լեռն ի վեր: Պատրաստեցին երկաթէ շղթայ եւ վեր նետեցին: Արշալոյսի իւանը շղթայի վրայով հասաւ լերան կատարին: Այստեղ՝ պղնձէ, արծաթէ եւ ոսկէ տներում հանդիպեց երեք աղջկներին, սպանեց նրանց պահապան դեւերին եւ քոյլերին իշեցրեց լեռն ի վար: Երբ ինքն էր պատրաստուում իջնել, երկաթէ դեւը կտրեց շղթան, իսկ Արշալոյսի իւանի եղբայրները չխանգարեցին նրան: Արշալոյսի իւանը լերան վրայ օդում թռչող մի զօրաւոր նժոյգ յայտնաբերեց եւ նրան հեծած, հասաւ թագաւորի քաղաքը Հաշուեյարդար տեսաւ երկաթէ դեւի եւ իր աւագ եղբայրների հետ: Ամուսնացաւ թագաւորի կրտսեր դստեր հետ եւ ժառանգեց արքայական գահը:

Ինչպէս պարզ երեւում է, այս հեքիաթում եղբայրներից մէկը Լուսինն է՝ միջնեկ եղբայրը՝ Կէսգիշերուայ իւանը: Մեծ եղբայրը մայրամուտի Արեւն է, Արշալոյսի իւանը՝ լուսածագի: Դարձեալ առկայ է կրտսեր եղբօրը նախանձելու մոտիւր: Ճիշտ է, բացակայում է հերոսի՝ հորը կամ ջրհորն ընկնելու միջադէպը եւ դրա փոխարէն երեւան է գալիս լերան դրուագը, սակայն դա չի բացառում այն, որ երրորդ եղբայրը հանդերձեալ աշխարհ է ընկեր:

Լեռը նոյնպէս ընդհանուր առասպեկտաբանութեան մէջ ընկալում է իրեւ հանդերձեալ աշխարհ տանող ճանապարհ: Շումէշրական Գիրգամէշ էպոսում Գիրգամէշն անմահութիւն գտնելու փափաքով անցնում է Մաշու լեռների միջով, «որոնց կուրծքը ներքեւում սանդարամետին է հասնում»²⁸: Շումէշերէնում «կուրք» բառը սկզբնապէս համատեղուել է «լեռ» եւ «հանդերձեալ աշխարհ» հասկացութիւնների հետ եւ յետոյ միայն գործածուել «օտար երկիր» նշանակութեամբ²⁹: Զրադաշտական հաւատալիք-

ներում, հանդերձեալ աշխարհ տանող կամուրջը ձգւում էր Հարատի լեռան կատարից մինչեւ երկնքի խորքերը³⁰: Յունահոռմէական Ամուրի եւ Փսիխէայի առասպելում Փսիխէային հանդերձեալ աշխարհ են ճանապարհում բարձր ժայռի կատարից³¹:

Հայկական Ալօ-Դինոյի հեքիաթը նոյնպէս, ի դէմս երրորդ հերոսի, պահպանել է յուշն Արեւի մասին, եւ դա ասում է հեքիաթասացը՝ դեւերի բերանով: Դեւերը երեքն են: Հերթով գալիս, տեսնում են իրենց տուն մտած հերոսին, որի հետ պէտք է մենամարտեն: Նրանց առաջին խօսքն է՝ «Բարով եւ էկել, Ալօ-Դինօ»: Հերոսը հարցնում է. «Դու ի՞նչ գիտես, որ ես Ալօ-Դինօն եմ: Դեւը պատասխանում է. «Ես, որ սարերովք ման ի գալիս, էն վախտը ծառերը, քարերը, խոտերը ճէն տուին, թէ. «Ալօ-Դինօն մօրիցն էլաւ: Թէ որ դու Ալօ-Դինօն չըլնես՝ մեր տունն իմ ահիցը մարթ կարալ չի գալ»³²: Թւում է՝ ի՞նչ կապ ունի այստեղ Ալօ-Դինոյի մայրը, երբ հեքիաթում ոչ մի խօսք չի ասում ո՛չ նրա, ո՛չ էլ հերոսի ծննդեան նկարագրութեան մասին: Մինչդեռ կապն ամենաուղղակի է: Այդ Արեւն է, որ հայկական ժողովրդական բանաւոր խօսքում երեկոյեան ոչ թէ «վայր է իջնում», այլ «մայր է մտնում», իսկ առաւտեան, երբեմն ասել են. «արեւը մօր ծոցէն ելաւ»³³: (Արեւի մայրը գուցէեւ կարող է համազրուել Մայր Հոռի մասին ընդհանուր առասպելաբանութեան մէջ տարածուած դիցաբանական ըմբռնմանը, այն հողի, որի ընդերքից, ըստ հեքիաթների տրամադրած նիւթի, առաւտեան դուրս է գալիս արեգակը): Այդպէս էլ հեքիաթում ամրող բնութիւնն ազդարարում է, թէ լուսաբացին «մօրիցն էլաւ» Արեւն իր լոյսով է ողողել շուրջբռնորը, քանի որ բնութիւնը կենդանի աշխուժով է սկսում լցուել հենց լուսաբացին: իսկ գիշերը ծառերը, քարերը եւ խոտերը «ճէն չեն տալիս», թէ «Ալօ-Դինօն (Արեւը) մօրիցն էլաւ»:

Նշանակում է երեք եղբայրների մասին հայկական հեքիաթներում էլ պէտք է հակուած լինենք տեսնել հայոց մէջ վաղեմի ժամանակներում պաշտուած երեք եղբայր Արեւ աստուածներին, որոնցից աւագները հակասութեան մէջ են յայտնուել կրտսերի հետ եւ նրան ուղարկել հանդերձեալ աշխարհ: Այստեղից կրտսերը դուրս է եկել վիշապներին (դեւերին) յաղթած եւ նրանց առեւանգած աղջիկներին ազատած: Դուրս է եկել իբրև եւ քաջագործ հերոս եւ ամուսնացել աղջիկներից կրտսերի հետ:

Կրտսեր Արեւը դիտուել է իբրև հանդերձեալ աշխարհ՝ ստորերկրայք մտնող եւ այնտեղից ենող աստուած: Այսպիսի պատկերացումը միանգամայն համապատասխանում է Գիշերամայրերի մասին հայկական հաւատալիքին, որի համաձայն, պառաւ վհուկները՝ «Գիշըրուան մէրերը» ամէն օր հետապնդում են Արեւին՝ արշալոյսից մինչեւ մայրամուտ: Արեւը նրանցից խոյս տալով, երեկոյեան իջնում է երկրի ընդերքը, իսկ այդաբացին նորից լոյս աշխարհ գալիս³⁴: Վերջալոյսին գետնի տակ մտնող նոյն

այդ Արեւին վանեցիներն ասել են «մեռլի արեւ»³⁵, իսկ շիրակցիներն ուղղակի՝ «մեռելի փայ արեւ»³⁶: Ուրեմն այդ Արեւն առնչուել է մեռելների հետ, որոնք ստորերկրայբում են: Այստեղ է իջել հայերի Արեւը, ինչպէս՝ շումէրա-աքարական դիցարանութեան մէջ Ութու (=աքքաղական Շամաշ)-Արեւն է գիշերը ճամբորդել ստորերկրեայ աշխարհում՝ մեռեալներին լոյս, ուտելիք եւ խմիչք բերել: Նրա մակդիրն է «մեռեալների հոգիների Արեւ»³⁷: Այս պատկերացմանն աղերսում է ալաշկերտցիների այն հաւատալիքը, թէ՝ Արեւը գիշերուայ ընթացքում ստորերկրեայ աշխարհում եօթ աւերակ քաղաքների միջով անցնում է մէկ ժամում³⁸: Մեռեալների աշխարհն իջնող, այսինքն՝ մեռնող Արեւի մասին եղած հնագոյն պատկերացումների արձագանքը թերեւ պէտք է տեսնել նաև մինչեւ մեր օրերը պահպանուած «Արեւդ մեռնի» անհծքի կամ «Ապրի Արեւդ» օրհնանքի մէջ:

Հայկական լեռնաշխարհի հարեւանութեամբ ապրած շումէրներից եւ աքքաղացիներից յայտնի դիցարանական նիւթում նոյնպէս կարելի է ի յայտ բերել այստեղ քննուող առասպեկտական մոտիւների հետքերը: Դիրգամէշչ հպոսի շումէրական տարրերակում, որտեղ մասնագէտները հակուած են աւելի շուտ հեքիաթային տարրեր տեսնել, քան հայկական (օրինակ՝ բոլոր հերոսներն իրենց կատարած սխրանքների համար պարտական են ոչ թէ սեփական դիցազնական ուժին, այլ աստուածների կամ «կախարդական-հրաշակերու օգնականների» օժանդակութեանը³⁹: Ուրուկ քաղաքի գերագոյն քուրմ էնմերքարը զօրք է ժողովում Արաստա պետութեան դէմ արշաւելու համար: Ի թիւս այլոց, արշաւանքին մասնակցում է ուրուկեան արքայական դինաստիայի չորրորդ կառավարիչ Լուգուլքանդան, որի նախնին եւ տումական աստուածն Ութու-Արեւն է: Արաստայի ճանապարհին Լուգուլքանդան հիւանդանում է, իսկ Ութուն նրան ոտքի է կանգնեցնում «կենաց խոտերով» եւ «կենաց ջրերով»:

Նիւթի շարունակութեան մէջ խօսւում է ապաքինուելուց յետոյ, Զարուա (կամ Սարուա) լեռներում Լուգուլքանդայի թափառումների եւ դեգերումների մասին, այն մասին, որ նա երազում է վերադառնալ ուրուկեան զօրքերի մօտ: Վիթիասրի Անզուր հաւքի օգնութեամբ նա հասնում է իր նապատակին: Լուգուլքանդան փնտուում, գտնում է արծուի բոյնը եւ թուշնի բացակայութեան ժամանակ կերակրում նրա ձագին, ինչպէս նաև զարդարում բոյնը: Այդ արարքից յուզուած Անզուրը Լուգուլքանդային արագավազութեան շնորհ է ընծայում⁴⁰: Շումէրական տարրերակում նրանց երկուսի մասին ասւում է. «Երկնակամարում Անզուրն է սուրոււմ, երկիր վրայ Լուգուլքանդան է սուրոււմ»⁴¹:

Անզուրն իր ձագի հետ ապրում է կենաց Մառի ճիւղերի վրայ, աւելի ճիշտ՝ կատարին, քանի որ Մառի կենտրոնում տեղաւորուած է դիւական

ոգի Կիլիթը, իսկ արմատների մէջ՝ դիւական օձը⁴²: Անզուղն առիւծագ-լուս է եւ չումէրական քարափորապութեան մէջ սովորաբար պատկեր-ւում է առիւծներին կամ եղերուներին ճանկած վիճակում: Նա դիւտում է իրեւ մահուան խորհրդանիշ, որին հակադրում է Կենաց Մառը⁴³: Եթէ այդպէս է, եթէ մահուան խորհրդանիշն է արեւային ծագում ունեցող Լուգուլքանողայի կախարդական օգնականը, որն օգնում է նրան օտար աշխարհից իր մերձաւորների (գորքի) մօտ վերադառնալ, ուրեմն, վերջի-նիս հիւանդանալն էլ այլ կերպ չականալ, քան մահուան վիճա-կում յայտնուելը, մանաւանդ, եթէ հաշուի առնենք, որ նրան այդ վիճա-կից դուրս բերողն էլ «կենաց խոտերն» են եւ «կենաց ջրերը», որոնք դիցա-րանական, հերիաթային մոտիւներում, սովորաբար, մեռեալին են կեանքի կոչում:

Այս հանգամանքն ակամայից մի մտքի է յանգեցնում, որի համար, ցաւօք, աղբիւրների բացակայութեան պատճառով, առայժմ հնարաւոր չէ ուղղակի ապացոյցներ գտնել: Մնում է ենթադրել միայն, որ Լուգուլքան-դայի՝ Արատտայի ճանապարհից խոտորուելու եւ հիւանդանալու վայրը սկզբնապէս հենց հանդերձեալ աշխարհն է ընկալուել: Շումէրական ա-ռասպելի եւ մեզ հետաքրքրող հերիաթային-առասպեկական մոտիւների հիմնական տարրերութիւններն են արծուի թշնամի օձի (վիշապի) կերպա-րի բացակայութիւնը եւ այն, որ հերոսին օտար աշխարհից արծիւը դուրս է բերում ոչ թէ իր թեւերի վրայ, այլ արագավազութեան չնորհ ընծայե-լով:

Բայց չումէրա-աքքադական հաւատալիքներին ծանօթ է եղել նաեւ արծուի թեւերի վրայ ճախրող առասպեկական հերոսի կերպարը, որի մա-սին պատմում է արծուի եւ օձի թշնամանքի կապակցութեամբ: Այդ հե-րոսն էտանան է, որին վերաբերող առասպելից սոսկ պատառիկներ են մեզ հասել: Էտանան Արեւի խորհրդով օգնում է արծուին, որին հորն էր շպրտել օձը: Երախտապարտ թուզուն այդ արարքի դիմաց հերոսին իր թեւերի վրայ երկինք է բարձրացնում «Ճնունդ պարզեւող խոտը» գտնե-լու համար: Յատկանշական է, որ Քիշգամէշի ասուրական տարրերակում Գիլգամէշի կրկնակ էնկիդուն էտանային հանդիպում է ոչ այլուր, քան հանդերձեալ աշխարհում⁴⁴:

Դառնանք այժմ երեք երայրների մասին պատմող ռուսական հեր-իաթներին, որոնց Վլազիմիր Պրոպի մատնանշած մի շարք տարրերակնե-րում երրորդ՝ կրտսել եղբայրը կապուում է վառարանի, մրի ու մոխրի հետ: Նա կարծես սերտաճած լինի վառարանին, մշտապէս պառկած կամ նատած է դրա վրայ եւ երբեք չի բաժանում դրանից: Որոշ հերիաթներում նա նոյնիսկ գտնուում է վառարանի ներսում կամ վառարանի տակ: Այլ հերիաթներում, նա վառարանից այն կողմ է նստած՝ վառարանի ետե-

ւում: Նրա անուններն են Zapachnii Iskr (Վառարանի ետեւի Կայծ), Ivan Zapechin (Իւանի ազգանունն է, որ դարձեալ մատնանշում է վառարանի ետեւը), Ivashko Zapechnik (Վառարանի ետեւի իւանիկ), Ivan Zapetsin (Վառարանի ետեւի իւան) եւն.: Նա միշտ մոխրի մէջ է թաւալում. դրա համար էլ նրան անուանում են նաեւ Մոխրի իւան (Ivan Popialov): Մոխրի վրայ նստած է մասում 12 տարի, ապա երբ վեր է կենում ու թափ տալիս իրեն, վրայից 6 փուլթ մոխրի է թափւում: Երբեմն նա ծնուռմ է վառարանից:

Այս ամէնը ակամայից յիշեցնում են հայկական թոնիր-վառարանները, որոնք կլոր Արեւի տեսք ունեցող, գետնափոր հորեր են եւ իրենց մէջ վառուող կրակով էլ կարող էին զուգորդուել Հորից դուրս եկող Արեւի դիցարանական ընկալմանը Այսպիսի Հորի չուրջ էին պաշտամունք մատուցում միջնադարեան հայ արեւապաշտները, որոնց մասին Մինիթար Ապարանեցին գրել է. «Ժիրաքանչիւր ամի երկու անգամ կամ աւելի՝ ամենեքեան այր եւ կին, ուստի եւ դուստր, ժողովին ի գուգ մի յոյժ խաւարին»⁴⁸:

Թոնիր շուրջ սփուռած գոլ մոխրի վրա ծնկաչոք ծննդարերում էին հայ հարսները, երբ համայնքում եկեղեցի չէր լինում: Այստեղ էլ կատարւում էր մանկան մկրտութիւնը⁴⁹: Մանուկ էր նաեւ լրսաբացին Հորից (ստորերկայից) դուրս եկող Արեւը Նրանից էին օրհնութիւն եւ պաշտպանութիւն ակնկալում հայ հարսներն իրենց մանուկների համար, Արեւի կրակով էին կամենում զօրացնել նորածիններին: Մէկ անգամ չէ, որ այդպիսի սովորութեան ենք հանդիպում հայկական հաւատալիքներում: Վարանդայում Արեգակ եւ Լուսին պաշտող ծերունիներն ու պառաւները շրջում էին դէպի նոր ծագող Արեւը եւ ասում: «Աստծոյ ցնծուլն տուած ըրիգնակ ... իմ երեսս քո ոտանդդ տակը, դու իմ խոխէքը պահես»⁵⁰: Զաւախքում մանկաբարձը նորածնին գրկած, բարձրանում էր տանիք եւ դիմում Արեւին: «Աստուած, տղիս զամաթը բաց էրա»⁵¹: Տատմայերն, առհասարակ, նորածին երեխաններին օրհնելիս, ասում էին: «Սուրբ ըեգնակ (արեգակ), էս երեխի փայը տաս, երկնքիցը ցող ցողայ, գետնիցը պտուղ ստանայ, մենք էլ՝ մեղաւորներս, սրա շուաքումը ուտենք, կերակը բուենք»⁵²:

Ուստական հեքիաթների երրորդ հերոսի մրի եւ մոխրի հետ կապուած լինելը յիշեցնում է նաեւ հայոց մէջ պաշտուած Թուի Մանուկներին, որոնց անուան «Թուի» բաղադրիչն ուսումնասիրողները բխեցնում են հերոսի «թիսուելու», այսինքն, կրակի միջով հասունութեան հասնելու գաղափարից: Այս պարագայում Թուի Մանուկ հերոսը դիտուում է որպէս կրակի փորձութիւնն անցած պատանի: Փորձութեան ծէսը կարող էր արտայայտուել դէմքի կամ մարմնի մասերի մրով սեւացնելու ձեւով, ինչպէս

նկատում. է Աննա Այդինեանը³¹: Ուշագրաւ է, որ հայկական հեքիաթներում էլ Հորսն իջնող երրորդ եղբայրն անցնում է թէժ կրակի մրջով, որի այրող ջերմութեանը նրա աւագ եղբայրները չեն դիմանում եւ ինդրում են վեր հանել իրենց (տես օրինակ՝ «Անմահական խնձորը» հեքիաթը³²):

Հարկ ենք համարում աւելի հանգամանօրէն խօսել Թուկ Մանուկների մասին, որոնց հայ բանագիտութիւնը ցայժմ միակողմանիօրէն ներկայացնում է իրեւ սոսկ Ամպրոպամարտիկ հերոսի կերպարի քրիստոնէական վերապրուկներ, առանց հաշուի առնելու, որ ընդհանուր առասպեկտարանութեան մէջ Արեւը նոյնպէս կարող է Ամպրոպամարտիկի (վիշապամարտիկի) յատկանիշներով երեւան գալ, ինչպէս եղել է Միհրը իրանական առասպեկներում³³:

Թուկ Մանուկները նախացրիստոնէական դարերից եկած փոքր, մատուանման շինութիւններ էին՝ ուխտավայրեր, որոնց այցելում էին մոմ վառելու եւ աղօթք անելու համար: Ժողովրդական հաւատալիքներում Թուկ Մանուկներից, Թուկներից, Աղէկ Մանուկներից (Մեզմէ Աղէկներից) ակնկալում էին հիւանդութիւնների բուժում եւ բերքատուութիւն³⁴: Նրանց սրբավայրերում աղօթում էին, ասելով. «Աստուած ողորմի մեր նախնեաց Հոգւոյն»³⁵: Ժողովրդական այս աւանդոյթների մէջ ակնյայտ է նոյն այն երրորդ եղբայր՝ Արեւ հերոսի կերպարը, որը կապուած է հանդեմեալ աշխարհի հետ եւ որը հնագոյն շատ հաւատալիքներում (յատկապէս Բարեկոնում, Խեթական թագաւորութիւնում եւ Եգիպտոսում) դիտուել է իրեւ մարդկանց բարիքներ բերող, պտղաբերութիւն չնորհող աստուածութիւն³⁶:

Կայ նաեւ Թուկ Մանուկների արեւային՝ փայլուն, լուսաւոր յատկանիշը ցոյց տուող Սպիտակ Մանուկ տեսակը, որի մասին յիշատակել է Մեսրոպ Արք. Մմբատեանը: Նոր Բայազէտի Ս. Կարապետ Եկեղեցու մօտի մատուանման սրբավայրի խաչքարերից մէկի վրայ գրուած է եղել. «Սուրբ խաչ բարեխաւ մանկան»: Այս Սպիտակ Մանուկն իր սպիտակութեան չնորհը տարածած է եղել մատուուի մօտ բնակուող «Բաղէյի Աղոյի որդւոց վերայ..., որոց դէմքն ու մազերը՝ այնքան սպիտակ, որ տեսնողն կարծի ծերացած լինին»³⁷: Գալուստ Տէր-Մկրտչեանը Սեւանի աւագանում նկատել է, թէ Թուկ Մանուկ սրբավայրը սպասարկում են ալրինոս (սպիտականեր, կարմրագէմ) երիտասարդները³⁸:

Թուկ Մանուկի պաշտամունքին ինքնակամ ճորտութեան մտած մանուկների ծամերը կտրել եւ նրանց ընծայել են տաճարներին իբրեւ ծառայ: Այդ մանուկները միայն ծնողների դրամական նուէրով են ետքնուել:

«Թուկ Մանուկ» են անուանել նաեւ առանձին անհատների մօտ (այդ թուում՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի ձեռագրատանը) պահուող ձեռագիր ա-

ւետարանները, որոնց ժողովուրդը հրաշագործ զօրութիւն է վերագրել⁵⁰: Դրանք կոչուել են նաեւ «Կարմիր» կամ «Կարմիր Կող» աւետարաններ, թէպէտ, կազմուածքի գոյնով կարող եւ կարմիր չինել. Թերեւս, այդպիսի սրբութիւնների շարքին պէտք է դասել նաեւ «Շուրիշկանի Աւետարան» կոչուող ձեռագիրը (Պարսկահայքի Շուրիշկան բնակատեղի անունից), որն այժմ գտնուում է Մաշտոցի անուան Մատենադարանում: Մնողներն իրենց արու զաւակներին «ղուլք» (ծառայ) են կարգել այս աւետարանին եւ մինչեւ եօթ տարեկանը մազերը չեն կտրել: Աւանդութեան համաձայն, նրան վերագրուել է կարմիր-կանաչ զգեստներ հագած, սուսերաւոր մի զօրաբանակ, որը փախուստի է մատնել թշնամուն, երբ սա յարձակուել է Շուրիշկան գիւղի վրայ⁵⁰:

Հայկական աւանդոյթներում յաճախ է կարմիր արեւը համազրուել կանաչ գոյնի հետ: Հարսանեկան գովերից մէկում ասւում է:

Թագուոր ի՞նչ բերեմ քէն նման,

Քիո կանանչ արեւն քիո նման.

Մեր փարդենիսն, որ բացուէր,

Բացուէր քիո արեւ դյու նման⁵¹:

«Թագուորը» (թագաւորը) փեսան է, որին նմանեցրել են Արեւին:

Մանուկներին օրհնուում էին ասելով. «Բարով կանաչ-կարմիրդ կապենք», այսինքն, պսակենք, ապա՝ «Սալ աշխարհի համար արեւ ու լուսին դառնաս» կամ «կանաչ ու կարմիր թագաւոր մնոս (դառնաս)», «կլնըշ-կրրմըրում կենաս»⁵²: Այսինքն, պիտի ենթազրել, որ «կանաչն ու կարմիրը» Արեւն է կամ՝ Լուսինը, կամ էլ Արեւն ու Լուսինը համատեղ: Կանաչ-կարմիր թագաւոր էր ընկալում նաեւ Արեւի երկուական կէս Լուսինը՝ արական կերպաւորմամբ: «Նոր-նոր նորաւոր, կանաչ-կարմիր թագաւոր, ծեր գացիր, տղայ էկար»⁵³: Կանաչ-կարմիր բոց էր դուրս գալիս հայկական էպոսի Զոջ Մէեր-Արեւի գերեզմանից⁵⁴: Զոջ Մէերն էպոսում ուազմական բնաւորութիւն ունի եւ դրանով կարող է աղերսուել Շուրիշկանի Աւետարանի կանաչ-կարմիր հագած զօրքին:

Մազերը, ծամերը, որոնք կտրում եւ ընծայում են թուխս Մանուկներին կամ չեն կտրում սրբավայրերին ծառայող մանուկների գլխից, նոյնպէս Արեւէ խորհրդանիշ են: Հայկական հաւատալիքներում, արեւածագից առաջ հրեշտակներն Արեւին հրեղէն (այսինքն՝ կարմիր) զգեստներ են հաղցնում: Արեւը դուրս է գալիս լեռան ետեւից, ցոյց է տալիս հրեղէն վարսերով գլուխը եւ բարձրանում երկնակամար⁵⁵: Ալաշկերտցիները, երբ մանուկների գլուխը խուզել են, գլմի վրայ կլոր մաս են թողել, որ կոչուել է «կալ» եւ դիտուել Արեւին համարժէք⁵⁶: Ուրարտական Արեւ աստուած Շիւինին նոյնպէս կարմիր թլուրի գօտիներից մէկի վրայ պատկերուած է

որպէս ծնկած, հարուստ վարսերով պատանի^թ: Երկար վարսեր էին պահում նաեւ Տարօնի իննակնեայ վայրում պաշտուող Գիսիանէ աստծոյ քրմերը, քանի որ նրանց աստուածն էլ գիսաւոր էր: Գիսիանէին, որի իրական արեւային բնոյթի վերաբերեալ երբեւ խօսակցութիւն չի ընթացել, բնորոշում էին ոչ միայն վարսերը, այլեւ մարդկանց աչքերը կուրացնելու կարողութիւնը^թ: Այդպէս, Արեւն Հայկական աւանդութիւններում մարդկանց աչքերը կուրացնում է ասեղնասուր ճառագալթներով^թ: Նոյն հրեղէն վարսերով եւ աչք կուրացնելու յատկանիշներով է բնորոշում նաեւ Ս. Կարապետը, որի վանքը կառուցուած էր Գիսիանէի կործանուած բագինի տեղում: Նա հրեղէն եւ լուսաւոր այր է, որի վարսերից լոյս է փայլատկում եւ կուրացնում թշնամիների աչքերը^թ: Պատահական չէ, որ նոր Բայազէտի Սպիտակ Մանուկ սրբավարն էլ կառուցուած է Ս. Կարապետի եկեղեցու մօտ: Մանուկների մազերին տուած նրա սպիտակութեան շնորհն էլ պէտք է իր կերպարանքի բնորոշչը Համարել, իրբեւ Արեւի լուսաւոր վարսերի ցուցիչ:

Ինչ վերաբերում է վառարանի վրայ պառկած ոռւսական երրորդ եղայր իւանին, Պրոպը նկատում է, որ նրան նուիրուած հերթիաններում առկայ է նաեւ Հանդերձեալ աշխարհ գնալու եւ վերադառնալու, մեռնելու եւ յարութիւն առնելու գաղափարի արձագանքը: Բուխտան Բուխտանվիշի մասին ոռւսական հերթաթում, հերոսը պառկած է դաշտի վառարանին, իսկ վառարանը գտնուում է միների վրայ: Պրոպն այս տեսարանը նոյնացնում է կախովիք, բարձրագիր գերեզմանում Հանգչող Հանգուցեալի հետ, քանի որ մէկ այլ հերթաթում նոյնպիսի կախովիք գերեզմանում թաղուած մեռեալի ծունկը կրծելուց յետոյ զամբիկը որդի է ունենում: Զամբիկի իւանին (Inan Kabilnîkon): Ուստի, եզրակացում է, որ վառարանն այս, երրորդ հերոսի ոչ միայն ծնուելու, այլեւ մեռնելու վայրն է: Հերթաթային նմանատիպ մոտիւներն արտայայտում են Հանգուցեալի դին այլելու կամ օջախի մօտ թաղելու պատմական իրողութիւնը: Ուստական մէկ այլ հերթաթում առաւել ակներեւարար է ցուցադրուած այրուած Հանգուցեալի վերածնուելու վաղնջական ըմբռնումը Քահանան սովորութիւն է ունենում դատեր Համար ընծաներ բերել: Մի անգամ, ճանապարհին տեսնում է, թէ ինչպէս է մոխրանում մարդկային վառուող գլուխը: Մոխրիը լցնում է տուփի մէջ եւ տուն է բերում, որ թաղի Դուստը հօր գրպանում հերթական ընծան փնտուելիս, գտնում է տուփը, բացում, լիզում է մոխրիը եւ դրանից յշիանում: Այստեղ, ինչպէս եւ զամբիկի հետ կապուած հերթաթային մոտիւում, ինչպէս ճիշտ նկատում է Պրոպը, գործունեք մեռածի վերադարձի հետ^թ:

Հստ երեւոյթին, օջախի մօտ Հանգուցեալին թաղելու, ապա եւ վերածնուելու Հնագոյն հաւատալիքին է աղերսւում նաեւ Հայկական այն սովորութիւն է ունենում դատեր Համար ընծաներ բերել: Մի անգամ, ճանապարհին տեսնում է, թէ ինչպէս է մոխրանում մարդկային վառուող գլուխը: Մոխրիը լցնում է տուփի մէջ եւ տուն է բերում, որ թաղի Դուստը հօր գրպանում հերթական ընծան փնտուելիս, գտնում է տուփը, բացում, լիզում է մոխրիը եւ դրանից յշիանում: Այստեղ, ինչպէս եւ զամբիկի հետ կապուած հերթաթային մոտիւում, ինչպէս ճիշտ նկատում է Պրոպը, գործունեք մեռածի վերադարձի հետ^թ:

բոյթը, համաձայն որի, ընկած ատամները, կտրած եղունգները թաղում էին թուրի շուրթին՝։ Կտրած եղունգը թաղելով, ասում էին «Եղունկ, դու ֆոս կեցի, Աղամ, դու վկայ կեցի», որպէսզի վերջին դատաստանի օրը եղունգը գայ, իրենց գտնի՝։ Վերջին դատաստանը քրիստոնէական ըմբռնումներով, անցկացուելու է բոլոր ողջերի եւ մեռածների նկատմամբ, իսկ զրադաշտական հաւատալիքներով, որոնց աւելի մօտ է հայկական այս սովորոյթը, վերջին դատաստանի օրը հողը վերադրածներու է բոլոր մեռալների ոսկորները՝։ Այստեղից կարելի է կռահել, թէ ինչու Հայկական Լեռնաշխարհում կտարուած պեղումների արդիւնքում բացուած դամբարանային թաղումներում հանդուցեալները կծկուած դիրք ունեն, իսկ գորոխները շրջուած են արեւելք՝։ Հողն ընկալուել է իրեւ մայրական գիրկ, արգանդ, իսկ արեւելքից, Ծին հաւատժի համաձայն, վերածնուում էր հանդերձեալ աշխարհ մտած Արեգակը. Հանդուցեալներից էլ ակնկալուել է նոյնպիսի վերածնուուելու կարողութիւն, մանաւանդ, եթէ նրանք մօտ են գտնուում արեգակնատես թոնիրին, որտեղից, իրեւ հանդերձեալ աշխարհից, յարութիւն է առնուում Արեւը. Դա լուսածագի տեսարանն է, իսկ լուսածագը, ինչպէս ճիշտ նկատել է Արեգակնը, հայկական հին հաւատալիքները կապուամ էին մեռեների յարութեան հետ՝։

Ուստական հեքիաթների օջախի հետ կապուած երրորդ հերոսն այսպիսով, նոյնպէս հանդերձեալ աշխարհ մտնող եւ դուրս եկող, վառուող Արեւն է, որի մասին յուշը հեքիաթներում պահպանուել է այնքանով, որ իւանը «Կայծ» է (iskr) անուանուած, կապուելով վառարանի հնոցի հետ։ Նա նաև մեռնող, յարութիւն առնող մահկանացուի խորհրդանիշն է, որի ոգին մահուանից յետոյ ապրում է տան մէջ՝ իր հարազատների շրջապատում։

Երեք եղբայրների առասպելոյլթի հիմքում ընկած է եղել երեք եղբայր Արեւների դիցաբանութիւնը, որոնցից երրորդը՝ կրտսերը աւագների հետ ունեցած հակասութեան կամ հակամարտութեան պատճառով յայտնուել է հանդերձեալ աշխարհում եւ այնտեղից դուրս եկել իրեւ սիրադրութ, վիշապասպան հերոս։ Զակամարտելու տրամադրութիւնն աւանդաբար գալիս է աւագ եղբայրներից, որոնք նախանձում են կրտսերի սիրանքներին եւ նրա դէմ են դուրս գալիս փառասիրութիւնից մղուած։ Մինչդեռ կրտսերը յաճախ ներողամտութիւնն է ցուցաբերում։ «Անմահական ինճորը» հեքիաթում, օրինակ, թագաւոր հայրն իմանալով կրտսեր որդու հանդէպ աւագների ցուցաբերած նենգութեան մասին, դահիճներին հրամայում է գլխատել նրանց, բայց կրտսերը չի թողնում։ «Նրանք ինձ մուխաննաթութիւն արեցին, ես չեմ անի Աստուած թող նրանց բարին տայ»։ Այլ հեքիաթներում կրտսերը լուծում է իր վրէժը՝ եղբայրներին մահուան մատնելով։

Արեւի եռակի բնոյթի մասին ըմբռնումը ցայտունօրէն արտայայ-
տուած է Հնդարիական առասպելներում: Ագնի աստուածն ակնյայտ արե-
ւային յատկանիշներ է կրում: Երբ նա երկնքից իջնում, սուզւում է ջրերի
մէջ, աշխարհին գիշերն է տիրում⁷: Մնուել է ջրերում, երկնքում եւ
մարդկանց մէջ: Նրան անուանում են «երեք կացարան ունեցող»: Ունի ե-
րեք գրյուն եւ երեք կեանք, երեք գլուխ եւ միաժամանակ՝ ոչ մէկը, երեք ուժ
եւ երեք լեզու⁸, եռափեղկուած է եւ եռամիասնական: Երեք գործառոյթ
ունի վերայական Սահիտար-Արեւը, որն ընդգրկում է օդային եւ երկնա-
յին երեք տարածութիւն, շարժման մէջ է դնում երեք երկինք եւ երեք եր-
կիր, մարդկանց պահպանում է երեք ուխտով⁹:

Կան Հնաւանդ շատ առասպելներ, որոնք Արեւի «մահը» (մայրամու-
տը) երկնակամարում բացատրում են ցերեկային լուսատուի ուղղակի
սպանութեամբ, ինչը բխում է երկիրը նրա կործանարար տապից փրկելու
անհամեշտութիւնից: Մոնղոլական դիցարանութեան մէջ հրէշը երկրի
վրայ ամէն ինչ այրելու նպատակով երեք Արեւ է աշխարհ բերում: Հերո-
սը՝ ստիպուած, սպանում է նրանցից երկուսին: Ամուրի գիշեակների ա-
ռասպելում երկնքում միաժամանակ յայտնուած երեք Արեւները երկրի
վրայ այնպիսի հեղձուցիչ մթնոլորտ են առաջացնում, որ ամէն ինչ
սկսում է եռալ ու ալլուել: Երկու աւելորդ Արեւներին սպանում են երկու
հերոս: Միբիրի միւս ժողովուրդների՝ ուլքերի, գոլգերի եւ օրոչյների ա-
ռասպելներում Արեւին սպանող հերոսը գործում է միայնակ¹⁰: Զինական
դիցարանութեան մէջ Արեւների թիւը հասել է տասի, որոնք ուր որ է կրա-
կի պէտք է մատնէին երկիրը: Դրանցից իննին սպանում է նետաձիգը¹¹:

Այս մոտիւներով, սակայն, երեք Արեւների դիցարանութիւնը չի
սպատում: Հնագոյն շատ ժողովուրդների մշակոյթներում Արեւի «մահ-
ուան» պատճառը ոչ միայն նրա աւագ եղբայրներն են կամ երկրային հե-
րոսը, այլեւ հայր եւ որդի Արեւների հակամարտութիւնը: Այս դէպքում
պայքարը շատ աւելի դրամատիկ է: Ունի հարուստ գաղափարախօսական
յնք, որից յետագայ ժամանակներում ազգուել է ոչ միայն քրիստոնէու-
թիւնը, այլեւ խալամը: Սակայն, սա արդէն խօսակցութեան այլ ընդգրկուն
թեմա է, որը մէկ յօդուածի շրջանակներում հնարաւոր չէ սպառել:

ՄԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

¹ Պատմութիւն Վասն Մանկանն Եւ Աղթանն. Պատմութիւն Յաղագս Փահուլ Թագաւոր-
քին, աշխատասիրութեամբ Արմենուհի Արապեանի, Երեւան, 1983, էջ 109-142.

² Նոյն, էջ 13-14:

³ Ցէ՞մ Գագիկ Մարտոյեան, «Մանկան Եւ Աղջկայ Զրոյցի Ալլարանական Որոշ Խորհրդա-
նիշներ Հայ Միթնադրեան Նկեղեցական-Մեկնական Գրականութեան Լոյսի Ներքոյ»,
(յօդուածը անտիպ է):

⁴ Պատմութիւն Վասն Մանկանն, էջ 95.

⁵ «Այս գաւառին, որ կիսասույնին է համակարգի, սա է դայեակ անձրեւաց եւ սնուցիչ բուրաստանաց», Աշոտ Արքահամեան, Անանիա Շիրամացու Մատենագրութիւնը, «Յաղագ Կենանատեսակաց», Երեւան, ՀՍՍՌ Մատենադարանի Հրատարակչութիւն, 1944, էջ 325-326։

⁶ Յարութիւն Մարտիրոսեան, Գիտութիւնը Սկսւում կ Նախնադարում, Երեւան, «Առվետական Գրող» Հրատարակչութիւն, 1978, էջ 87։

⁷ Պատմութիւն Վասն Մանկանն, էջ 59։

⁸ ՏԵ՛Ն Գագիկ Մարտոյեան, Օճախշապ Արեւի Դիցարանութիւնը, Երեւան, «Զանգակ-Ց՛» Հրատարակչութիւն, 2001, էջ 17-46։

⁹ Այս հերիաթների մասին տե՛ս՝ Գագիկ Մարտոյեան, «Երուանդ Լալայեանի Ալբա Գեղեցիկ» ժողովրդական Հերիաթներում», Գայիազեան Հայագիտական Հանդէմ, Հոտ. ի., 2000, էջ 119-137։

¹⁰ Հայ Ժողովրդական Հերիաթներ, հ. Ա. Խմբ. Կ. Ա. Մելիք-Օհանջանեան, Երեւան, Հայկ. ՍՍՀ ԳԱ Հրատարակչութիւն, 1959, էջ 23։

¹¹ Նոյն՝ Հատոր VII, խմբ. Ս. Գ. Արքահամեան, Երեւան, Հայկ. ՍՍՀ ԳԱ Հրատարակչութիւն, 1979, էջ 585։

¹² Նոյն՝ Հատոր I, խմբ. Ա. Ղանալանեան, Երեւան, Հայկ. ՍՍՀ ԳԱ Հրատարակչութիւն, 1959, էջ 27։

¹³ Նոյն, էջ 49։

¹⁴ Նոյն՝ Հատոր V, խմբ. Ս. Գ. Արքահամեան, Երեւան, Հայկ. ՍՍՀ ԳԱ Հրատարակչութիւն, 1966, էջ 415։

¹⁵ Մրցու Հօրին Մերոյ Մովսէսի Խորենացոյ Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1910, էջ 105։

¹⁶ Մանուկ Արենեան, Երիկը, Հատոր Ա., խմբ. Ա. Ղանալանեան, Երեւան, Հայկ. ՍՍՀ ԳԱ Հրատարակչութիւն, 1986, էջ 384-385։

¹⁷ Մաստանցի Դաւիթ. Նոր Պատումներ. Հաւաքեցին եւ Հրատարակութեան պատրաստեցին Դրիփոր եւ Վահագն Դրիփորանները, Երեւան, 1977, էջ 333-340. Յայժմ մեզ չի հանդիպել բացատրութեան որեւէ փորձ (Ներառեան՝ Ազեղեանի երկերում) այն պարագուսալ հարցի կապակցութեամբ, թէ ինչու հերիաթները պահպանել են եղբայրների եռեակ թուաքանակի մասին յուշը իսկ հայկական էպոս՝ ոչ Ծննթաղբեկ կարելի է միայն, որ հերիաթներն իրենց մէջ աւելի խոր հնութիւն ունեցող դիցարանական նիւթ են պարունակում, քան էպոսը Տուեալ դէպքում անհերքելի է, որ ի դէմ Սանասարի եւ Բաղդասարի, էպոս է մուտք գործել երկուորեակների առասպելով Մինչդեռ հերիաթներում երեւան են գալիս առաջ, մինչեղ եւ կրտսեր եղբայրները, որոնց երկուորեակ լինելու մասին ուղղակիորէն վկայութիւն չկար Ընդ որում, Հարկ է նկատել նաեւ, որ Սանասարն էլ էպոսում ոչ թէ կրտսեր, այլ աւագ եղբայրն է, Բանահիւական ար հակասութիւնների լուծումը փոխուում ճանապարհին անօգուտ չէ խմանալ, որ կան «կիսատ խնձորը» եւ «կիսալանդը վերնագրերով», Երեք եղբայրներին վերաբերող Հայկական երկու հերիաթ եւս (Հայկական Ժողովրդական Հերիաթներ, հ. VIII, Հատորի բնագրի պատրաստումը, նախարանը, ծանօթագրութիւնները, բառարանն ու ցանկերը Ա. Ս. Նազինեանի եւ Ռ. Հ. Գրիգորեանի, Երեւան, Հայկ. ՍՍՀ ԳԱ Հրատարակչութիւն, 1971, էջ 457, 508), որոնցում երրորդ եղբայրն ակնյայտօքն էպոսի Բաղդասարի յատկանիներն է կրում, իբրև Փիղիկապէս պակասաւոր ծնունդ էպոսում մի ընդլայ (Կողմը: Հանրայատ է, որ այդպէս կրտսեր եղբայր Բաղդասարն է Մովսէնարի խմած հէս բուռ ջրի պատճառով էպոսում վիզը ծուռ ծնունդ: Կիսատ խնձորը հերիաթներ բնագրներին մայրն իր զաւակներին աշխարհ է

բերում ոչ թէ ջուր խմելով, այլ խնձոր ուտելով, սակայն այսուեղ էլ ակներեւաբար անարատ յիշութեան փաստի ենք առնչում: Երրորդ խնձորը մարզ կիսատ է կերել, այդ պատճառով էլ երրորդ որդին պակասաւոր է ծնոււի: «Կիսանդր» հերթաթում աւագ եղայլները կրտսերին հորեւն են դցում: Նա գնում է երկնքով թուզող Ծովինար աղվայ ետեկց եւ ազատում նրան վիշապի գերովիւնից: Այս զուգադրումները հիմք են տալիս չքացառել, որ էպոսի նախնական ինչ-որ պատումում այնուամենայնի յիշուած է եղել երկուորեակ եղրացների եռեկակ թուաքանակը, սակայն այդ պատումը մեզ չի հասեր: Միեւնոյն ժամանակ միարժէք է, որ ամենաէչականը ոչ թէ էպոսի երկու կամ հերթաթների երեք եղրայրների թուաքանակն է, այլ նրանց զերագրուող առասպելական, հերթաթային մոտիւների նոյնութիւնը:

- 18 Edward Taylor, *Pervobitnaia kultura (Նախնադարեան Մշակոյթ)*, Մոսկուա, 1980, էջ 186-187, 288.
- 19 Սարդին Յարութիւննեան, Հայ Ժողովրդական Համերուկներ, Հայկ. ՍՍՌ Գյուղութիւնների Ակաբեմիա, Երեւան, 1965, էջ 7.
- 20 Ներսէս Շնորհալի, Բանք Զափաւ, Վենետիկ, 1830, էջ 564.
- 21 Vladimir N. Toporov, «Ob otrazhenii odnogo indeoevropskogo mifa v drevnearmianskoj traditsii» Պատմա-Բանասիրական Հանդիս, 3, 1987, էջ 97-105.
- 22 Աբեղեան, Հատոր Ա., էջ 76.
- 23 Issledovaniia i stati N. O. Emina po armyanskoi mifologii, arkheologii i istorii literaturi (za 1858-1884 gg.) (Մ. Յ. Էմինի Ուսումնասիրութիւնները Եւ Յօդուածները Հայոց Դիցաբանութեան, Հնաբանութեան Եւ Գրականութեան Պատմութեան Վերաբերեալ) (1858-1884թթ.), Մոսկուա, 1886, էջ 81.
- 24 «Տրեսեակ» անոնք հիմքը ուռեսերէն երես-«երրորդ» թուականն է, իսկ ակ մասնիկն ազգանուանական վերաւորութիւն է: Այլպիսի ազգանուն Հանդիպում է նաև մեր օրերում: (Vodovichի Հայրանունն է): Ինչ վերաբերում է Tretiakի Եւ Vodovichի միջև եղած կապին, ապա դա գուտ անուանական է: Ամէկը ցոյց է տալիս Հերոսի երրորդը լինելու, միւսը՝ ջրից սերած լինելու (ուռեսերն ուժա-ջուր բառից) Հանգամանքը: Այլպիսին է նաև: Ընդպրիական Տրիտոն, որը Ռիզվելայում կապւում է ջրերի հետ, իսկ անունը ստուգաբանում է հին Ծնդկերէն երես-«երրորդ» արմատով:
- 25 Տորոց, նոյն:
- 26 Narodnie russkie skazki A. N. Afanaseva (Ա. Ն. Աֆանասևի Ռուսական Ժողովրդական Հերթաթները), I, Մոսկուա, 1985, էջ 241.
- 27 Gruzinskie narodnie skazki. sost. I per. N. I. Dolidze (Վրացական Ժողովրդական Հերթաթներ, կազմեց Եւ թարգմանեց Ն. Ի. Դոլիձէ), Թբիլիսի, 1958, էջ 15.
- 28 Հին Արևելքից Փէցինա, կազմեց Եւ խմբագրեց Հ. Էլոյան, Երեւանի Համալսարանի Հրատարակչութիւն, Երեւան, 1982, էջ 143.
- 29 Semuel Kramer, *Istorija nachinaetsja v Shumere* (Պատմութիւնը Սկսում է Շումերում), Մոսկուա, 1991, էջ 159.
- 30 Meri Boys [Mary Boyce], *Zoroastrilitsi. Verovanija i obichai* (Զրադաշտականներ. Հաւատալիքներ Եւ Առվորութներ), Մոսկուա, 1968, էջ 23.
- 31 Apulei, *Apologia, metamorphosi, floridi* (Ապոլոդիս, Փոխակերպումներ, Ֆլորիդներ), Մոսկուա, 1960, էջ 188-189.
- 32 Հայ Ժողովրդական Հերթաթներ, Հատոր 1, էջ 30.
- 33 Աբեղեան, Երկեր, Հատոր կ., կազմեց Եւ խմբագրեց Ս. Յարութիւննեան, Երեւան, Հայկ. ՍՍՀ ԳԱ Հրատարակչութիւն, 1975, էջ 41.

- ³⁴ Գարեգին Սրուանձտեանց, Երփեր, Հասոր 1, խմբ. Ս. Բ. Յարութիւնեան, Երեւան, Հայկ. ՍՍՀ ԳԱ Հրատարակչութիւն, 1978, էջ 149-150.
- ³⁵ Նոյն, էջ 149.
- ³⁶ Ա. Գ., «Արեւ Հայ Ժողովրդական Հաւատքին Մէջ», Հանդէս Ամսօրեալ, ԽԳ տարի, թիւ 10-11, Հոկտ.-Նոյեմբեր, 1929, էջ 643-644.
- ³⁷ *Misi narodov* ուրա (Աշխարհի ժողովուրդների Առասպելներ), հ. II, Մոսկով, 1992, էջ 522.
- ³⁸ Ա. Գ., էջ 648.
- ³⁹ Veronika Afanasiева, *Gilgamesh i Enkidu. Epicheskie obrazi v isskustve* (Գիլգամեշ Եւ Էնկիդու. Էպիկական Կերպարներն Արուեստում), Մոսկով, 1979, էջ 102, 105.
- ⁴⁰ Նոյն, էջ 97-98.
- ⁴¹ Նոյն, էջ 108.
- ⁴² Նոյն, էջ 86.
- ⁴³ Նոյն, էջ 32.
- ⁴⁴ *Misi narodov*, հ. II, էջ 671.
- ⁴⁵ Vladimir Propp, "Motiv chudesnogo rozhdeniiia," *Folklor i deistvitelnost* (Հրաշալի Մննդի Մոտիւը, Բանահրատութիւն Եւ Իրականութիւն), Մոսկով, 1976, էջ 216-217.
- ⁴⁶ Հայր Ղևոնդ Ալիշան, Հնն Հաւատք Կամ Հեթանոսական Կրօնք Հայոց, Վենետիկ, 1910, էջ, 103.
- ⁴⁷ Ազգագրական Հանդէս, III տարի, գիրք Գ.:
- ⁴⁸ Նոյն, II տարի, գիրք Բ., 1897, էջ 216.
- ⁴⁹ Ա. Գ., նոյն, թիւ 12, Դեկտեմբեր, ԽԳ տարի, 1929, էջ 758.
- ⁵⁰ Սարգիս Յարութիւնեան, Անձքին Եւ Օրհնանքի Ժանրը Հայ Բանահրատութիւն Մէջ, Հայկական ՍՍՀ ԳԱ, Երեւան, 1975, էջ 139.
- ⁵¹ Աննա Աղյինեան, ««Թուկ Մանուկի» Պաշտամունքի Որոշ Արտացոլումներ Հայուններում», տե՛ս՝ Թուկ Մանուկ. Նստաշըթանի Նիւթեր, Երեւան, 2001, էջ 45-46.
- ⁵² Տե՛ս՝ ծանօթ. թիւ 10.
- ⁵³ Johan Puhvel, *Comparative Mythology*, Baltimore and London, 1989, էջ 99-102.
- ⁵⁴ Աստուր Մնացականեան, ««Թուկ Մանուկ» Յուշարձանների Մասին» Պատմա-Բանահրական Հանդէս, 2, 1976, էջ 190-191, 196, 198.
- ⁵⁵ Մանուկը Միրախորեան, նկարագրական Ըլդեւորութիւն ի Հայարձակ Գաւառու Արեւելեան Տաճկաստանի, Մասն Բ., Կ. Պոլս 1885, էջ 48:
- ⁵⁶ Արեւի, իրեւ մշակութակերտ (բարիք երող) Հերոսի յատկանիշների մասին տե՛ս օրինակ՝ Viacheslav V. Ivanov, "K typologii drevneblizhnevostochnikh gimnov solntsu", *Sbornik statei po vtorichnym modeliruiushchim sistemam* (Հնագոյն Մերձաւոր Արեւելքի Արեւին Նուրիուած Օրներգերի Տիպարանութեան Շուրջ, Երկրորդական Մոդելարման Համակարգերի Վերաբերեալ Յօդուածների ժողովածու), Տարտու, 1973, էջ 48-49.
- ⁵⁷ Մեսրոպ Ալքեպիսկոպոս Աշճեան, Թուկ Մանուկ. Նստաշըթանի Նիւթեր, էջ 9:
- ⁵⁸ Հրավարդ Յակոբեան, ««Թուկ Մանուկների» Պատկերագրութիւնը Հին Հայաստանում», Թուկ Մանուկ. Նստաշըթանի Նիւթեր, էջ 63-64.
- ⁵⁹ Աշճեան, էջ 10-13, 16-18:
- ⁶⁰ Թամար Գէրգեան, «Շուրիշկանի Աւետարանի Գործառութիւնը Պարսկահայերի Աւանդական Կենցաղում», Հայոց Արքերը Եւ Արքավայրերը, Երեւան, 2001, էջ 411-413.

- ⁶¹ Ասատուր Մնացականեան, Հայիմական Զարդարուեատ, Երեւան, Հայկ. ՍՍՀ ԳԱ Հրատարակութիւն, 1955, էջ 235.
- ⁶² Յարութիւնեան, Անէժքի Եւ Օրհնանքի Ժանրը, էջ 224, 250, 257.
- ⁶³ Ազգագրական Հանդէս, Վ տարի, գիրք 2-, Թիֆլս, 1900, էջ 32.
- ⁶⁴ Սասեայ Մռել, Հատոր Դ., խմբ. Ա. Տ. Ղանապանեան, Ա. Մ. Նազինեան, Երեւան, ՀՀ ԳԱԱ «Գիտութիւն» Հրատարակչութիւն, 1999, էջ 349.
- ⁶⁵ Մրուանձտեանց, էջ 76-77.
- ⁶⁶ Համեման Ազգագրական Ժողովածու, Հմ. Ա. Մոսկվա-Ալեքսանդրավոլ, 1901, էջ 203.
- ⁶⁷ Սիմոն Հմայիսկեան, Վանի Թագաւորութեան Պետական Կրօնը, Հայաստանի ԳԱ Հրատարակութիւն, Երեւան, 1990, էջ 45, աղ. 4, 24, նկ. 1, 2.
- ⁶⁸ Պատութիւն Տարօնոյ Զոր Թարգմանեաց Զենոր Ասորի, Երկրորդ տպագրութիւն, Վենետիկ, 1889, էջ 32-37.
- ⁶⁹ Արամ Ղանապանեան, Աւանդագատում, Երեւան, Հայկ. ՍՍՀ ԳԱ Հրատարակչութիւն, 1980, էջ 5-7.
- ⁷⁰ Մամիկոնեան, էջ 218-219, 264.
- ⁷¹ Pröpp, էջ 218-219.
- ⁷² Արեգեան, Հատոր Է., էջ 50:
- ⁷³ Ե. Լալայեան, Երկեր, Հատոր II, Երեւան, էջ 251.
- ⁷⁴ Bois, էջ 38:
- ⁷⁵ Էմմա Խանզադեան, Ծառանի, Երեւան, Հայկ. ՍՍՀ ԳԱ Հրատարակչութիւն, 1979, էջ 38-47.
- ⁷⁶ Արեգեան, Երկեր, Հատոր Դ., խմբ. Էմմանուէլ Պիւզեան, Երեւան, Հայկ. ՍՍՀ ԳԱ Հրատարակչութիւն, 1970, էջ 368.
- ⁷⁷ Eduard Temkin, Vladimir Erman, *Mify Drevnei Indii* (Հին Հնդկաստանի Առասպեկները), Մոսկուս, 1982, էջ 29-30.
- ⁷⁸ Rigveda. Izbrannye gimni. (Ռիգվեդա. Ընտրուած Օրհներգեր), Թարգմանութիւնը, ծանօթագրութիւնները եւ ներածական յօդուածը Տ. Եա. Ելիզարենկովալի, Մոսկուս, 1972, էջ 106-108; *Mify narodov mira*, հ. I, Մոսկուս, 1991, էջ 189-190.
- ⁷⁹ Rigveda, էջ 189-190.
- ⁸⁰ Aleksandr Zolotarev, *Rodovoi stroi i pervonobitnaia mifologija* (Ցեղական Կարգը Եւ Նախնադարեան Դիցարանութիւնը), Մոսկուս, 1964, էջ 260-261.
- ⁸¹ Derk Bodde, "Mify Drevnego Kitaja", *Mifologii Drevnego mira* (Հին Չինաստանի Դիցանութիւնը, Հին Աշխարհի Դիցարանութիւն), Մոսկուս, 1977, էջ 390.

THE MYTHOLOGY OF THREE BROTHERS OR THREE SUNS IN
ARMENIAN AND FOREIGN CULTURE
(Summary)

GAGIK MARTOYAN

The legendary nature of the fairy tale of three brothers is known to exist internationally. However, no one has noticed and attempted to trace back the mythical references of the sun.

Comparative study of these fairy tales brings us to the conclusion that they carry to us a remote legend of three suns. These three suns have been mythically reified as the three positions of the sun throughout the day: in the morning, at noon, and in the afternoon. Furthermore, these fairy tales describe the death of the sun and its entry into the post-mortual world at sunset.

The youngest brother is the sunset sun, whom the elder brothers leave in the well (the road to the post-mortual world). The youngest brother finds himself in the Dark World, kills dragons (including the one that has terrorized the town, blocked the spring, asking for a female ransom every time he has to let some water go). The hero liberates the town from the dragon and arrives in the Light World on the wings of the eagle.

In Russian fairy tales the names given to the three brothers are linked to the light of the morning, to the light at noon and to that of afternoon or night (that of the sun-moon). In the Georgian "Ivan Zaria" fairy tale, perhaps influenced by the Russian, the three brothers not only bear these names (corresponding to the three locations of the sun) but they live in the sky too. In the Armenian fairy tale, "The Tale of Alo-Dino or Hazaran Belbool", nature itself warns that Alo-Tino "came out of its mother", similar to the way people describe the dawn, saying that the sun "came out of its mother".

An essential part of the three brothers' legend has been reflected by Medieval Armenian ecclesiastical exegetical literature. In the tale of the "*manoug* (=child, or young man) and the girl", the youngest brother is personified in the fair, decent and Christian character of the *manoug*. *Manoug* is described with solar characteristics, though he reminds us of the pre-Christian just-sun.

The sun-hero is hidden in the Armenian ritual worshipping of *tookh manougs*. Characteristics of the *tookh manougs* correspond to those of the third brother.

The mythical belief of the three suns was spread not only among the Indo-European, but among the Mongols and the races of the Amour Valley. It has been preserved basically as three brothers in mystery tales, which most probably have an Indo-European origin.

